ՄԱՍՆԱՒՈՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ
Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ ՍԵԲԱՍՏԻՈՅ

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս առաջնորդութեան Տեառն Առաքել Արքեպս.ի եւ Սրբոյ Վանօրէից նորոգութեան որ 'ի Սեբաստիա եւ վասն ի՛նչ ի՛նչ դիպուածոց:

Զկնի մահուան Սեբաստացի Աստուածատուր Արքեպս.ի՝ Թմփուկ կոչեցելոյ, միաբանեալ Քահանայից և իշխանաց Քաղաքիս բազմակնիք իր արարեալ յղեցին 'ի Կ. Պոլիս ընդ Տ. Պետրոս Աւագ Քհնյ.ի՝ առ Յովհաննէս Պատրիարքն՝ կոլոտ անուանեալ՝ յընտրել զայլ ոք իմաստուն՝ վկայեալ 'ի գործս բարութեան և կացուցանել Տեառուչ Սեբաստիոյ և թէպէտ ընտրեաց նա Եսայի Վրդպտ. ո՛ն կեսարացի, բայց ո՛չ ընկալան Սեբաստացիք՝ բնակեալք 'ի Կ. Պոլիս, այլ խորհրդով լուսմայափոխ Վէքիլեան Տ. Յարութիւն ամիրայի Ակնեցւոյ՝ խնդրեցին զԱռաքել Արքեպս. Ակնեցի, որ էր յայնժամ 'ի գաւառս Եկեղեաց 'ի վանս Ս. Ածածնի 'ի Ջուղայ։ Յայնժամ հանեալ Պատրիարքին զհրամանագիր Արքայական և զկոնդակ Պատրիարքական իւր ցՏէր Պետրոս Աւագ-Քհնյ.ն, զոր առեալ եկ 'ի ճանապարհ և գնացեալ եհաս 'ի վանս Առաքել Արքեպս.ին և յանդիման եկեալ մատոյց զհրամանագիր Արքային և զնամակ Պատրիարքական և ասաց. «Հայր Սուրբ, հրամայեա՝ զի երթիցուք յաշխարհն մեր»։ Եհարց Վարդապետն թէ «ո՞ ոք ուղարկեաց զքեզ կամ ուստի եկիր յայսր», ասաց Քհնյ.ն «'ի Կ. Պոլիս բնակեալ Սեբաստացի միաբանեալք յղեցին զիս առ քեզ»։ Ասէ Վրդպտ.ն. «ո՛չ կարեմ գալ ընդ քեզ, զի դու ո՛չ ունիս 'ի ձեռին քում զգիր իշխանաց Քաղաքիդ, զի եթէ եկից ընդ քեզ և Քաղաքացիքդ ո՛չ ընդունին զիս՝ զի՞նչ արարից յայնժամ, որոյ վասն երթ դու 'ի յԱշխարհս քում և տուր պատասխան այնոցիկ որք առաքեցին զքեզ»։ Եւ նա փութացեալ եկն 'ի Սեբաստիա և պատմեաց մի ըստ միոջէ զամենայն եղեալսն առաջի իշխանացն և նոցա արարեալ Մահսէր բազմակնիք և առեալ գիր 'ի բդէշխէն և զերիս զինուորս ապառազինեալս և զՄառացի Խաչիկն՝ Խոճա կոչեցեալ յղեցին յԵրզնկա, որք գնացեալ 'ի վանս Ս. Ածածնի՝ մատուցին Արքեպս.ին զգիր բդէշխին և զՀանրագիր իշխանացն՝ ասելով. «Հրամայեա՛ զի երթիցուք», և նա յետ բազմիցս հրաժարելոյ և անբաւական զինքս ցուցանելոյ յորդորմամբ Սահակ Արքեպս.ի Ակնեցւոյ (որ էր երբեմն Պատրիարք Կ. Պոլսոյ և յայնժամ Առաջնորդ Եւդոկիոյ և Երզնկայ) յանձն էառ գալ 'ի Սեբաստիա, վասն որոյ յանձնեաց զվանս առաջի Առաջնորդին և իշխանաց բազում անօթիւք, զգեստիւք և յոլով անասնովք՝ աշակերտին իւրոյ Տէր Յովհան երիցուն և առեալ ընդ իւր զՅարութիւն Վարդապետն Երզնկացի՝ որ պատմէ զայսոսիկ և Դպիր մի Կարապետ ազգակից իւր և եկն եհաս 'ի վանս Սրբոյ Նշանի 'ի Սեբաստիա՝ ՌՃՀԱ = 1722 Յունիսի 25՝ յաւուր երկուշաբաթի՝ Վարդավառի պահոցն։ Եւ լուեալ Քաղաքացւոցն զրոհ տուեալ միմեանց եկին ի տեսութիւն նորեկ Առաջնորդին և մեծաւ պատուով ընկալան զնա իբրև զԱռաքեալ յԱյ. և յետ աւուրց ինչ կրկին եկին 'ի վանս՝ առ ի գրել զանօթս վանուցս և յանձնել դյարին։ Եւ էին ժողովեալք այսոքիկ՝ Տ. Եղիազար և Տ. Յակոբ Վրդպտք., Տ. Պետրոս Աւագ Քահանայ և Տէր Յովհան, Տէր Սուքիաս, Տ. Յակոբ, Տ. Կարապետ Քահանայք և իշխանք մետասանք, և գրեցին այսպէս. 10 խաչ, 2 փոքր կանթեղ արծաթի, 6 Սաղաւարտ, 1 Գաւազան, 10 Շուրջառ հին և նոր, 10 ժամակալ պղնձի, 1 Ջահ, 150 Սահան, 10 գորգ և կարպետ, 3 Գոմէշ և այլ չոբեղէնք հնոտիք, և 700 դահեկան պարտք։ Ուտեստ ինչ ո՛չ գոյր, ո՛չ ցորեան և ո՛չ գարի. զի զկնի մահուան Առաջնորդին վաճառեալ էին և փեսային Թմփուկ Արքեպս.ի՝ Ալիքսանն Հողդարցի զամանս արտօրէից իւրացոյց և զամանս ցիր և ցան արար և 'ի խնդրելն նորեկ Տեառնին

digitised by A.R.A.R.@

զայն ամենայն, գնացեալ յարեցաւ առ Ալապէկն. և ձեռամբ նորին բազում վնաս հասոյց Վանուցս, և մինչև ուխտ անգամ տուգանս ետ տանել 'ի նորեկ Տեաչէն։ Եւ ինքն գնաց այլ այլազգւոյն այնմիկ 'ի Պարսս 'ի պատերազմ և անդ սատակեցաւ։ Առաքեալ Արքեպս.ն այս յորէ յորմէհետէ եղև Տեսուչ Սրբոյ Վանուցս՝ զամս իբրև հինգ. երկնէր խորհուրդս հանապազ 'ի սրտի իւրում վասն շինութեան և նորոգութեան նորին, զի կաթուղիկէ Մեծի Եկեղեցոյն կործանեալ անկեալ էր և զանեղի նորին փայտիւ ծածկեալ և քարինք տանեացն խախտեալ և աւերեալ յորոց անձրևք հոսէին 'ի վայր, և փայտեղէն շինուածք վասն այսր փտեալ և քակտեալ՝ ո՛չ գոյր սենեակ մի պատշաճաւոր Առաջնորդի և Միաբանից՝ զի 'ի բազմաց հետէ Առաջնորդք նստէին 'ի քաղաքիս, և Աբեղայ մի կամ ոմն Երէց այրի միայնին 'ի վանս. և յաւուրս կիւրակէից սպասաւորաւ միով մատուցանէին պատարագս։ Վասն որոյ ժողովեաց առ ինքն՝ Առաքեալ Արքեպս. զիշխանս Քաղաքիս և հաճեցուցեալ զԴատաւորն էառ հրաման և գրեալ աղերսական նամականիս առ այլևայլ անձինս և տուեալ զայնս 'ի ձեռս Տէր Նիկողայոս քհնյ.ի՝ առաքեաց զնա հանդերձ Տ. Պետրոսիւ 'ի Կ. Պոլիս առ Թէվէքէլեան Տ. Յարութիւն Ամիրայն, և նա 'ի ժողով գումարեալ զմեծամեծ ամիրայս Ազգիս մերոյ՝ առաջի էարկ նոցա զխնդիր Առաջնորդին Սեբաստիոյ և իշխանացն, և նոքա յօժարակամ հաճութեամբ փութացեալ առին յԱրքայէ զհրամանագիր շինութեան Սրբոյ Վանիցս՝ ծախսեալ 700 դահեկանս, և ետուն Տ. Նիկողայոս Քհնյ.ի, զոր առեալ դարձաւ փութանակի և հասեալ 'ի վանս ետ Տեաչին զՀրամանագիրն շինութեան և նա առեալ խնդալից գնաց առ Ջարալը–Օղլու Օսման Աղա՝ որ էր Միւսէլլիմ և նա եւս ուրախացեալ յղեաց զՀրամանագիրն 'ի Դատաւորն և ետ արձանագրել 'ի Տօմարն 64 դահեկանաւ. իսկ վասն Բդէշխին էառ 100 դահեկան և ետ զՀրամանագիր շինութեան Սրբոյ Վանիցս։ Եւ 'ի միւսում աւուր մեծամեծք այլազգեաց եկեալ 'ի վանս գրեցին զՔեշֆն և գնացին։

Եւ 'ի Թուին ՌճՀԶ = 1727 յուլ Սեպտեմբերի սրբոյ զոկիզըն նորոգութեան և շինեաց զգմբէթ մեծի Եկեղեցւոյն սրբատաշ վիմօք և կղմնտրք և զտանիսն քարիւ կճեայ և կրով ամրացուցեալ սպիտակացոյց և զառաստաղն, զկամարս, զորմունս և զյատակս, կառոյց և յետկոյս զասին խորանս երկուս, մին յաջմէ և զմիւսն յահեկէ և շինեաց նաև զվերնատունս կանանց՝ զի ո՛չ գոյր 'ի սկզբան։ Նորոգեալ պայծառացոյց և զՏաճար Ս. Աստուածածնին և շինեաց 'ի մէջ կամարացն զամբարս ցորենւոյ և գարւոյ, սպիտակացոյց զտանիսն, և զՏաճար Սրբոյ Կարապետին և մաքրեալ զկամարն աջակողմեան կանգնեաց 'ի նմա սեղան յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Կերտեաց և զվայելուչ Առաջնորդատունս կրկնայարկ և 'ի կից նմին մառանս գինւոյ և սենեակս միաբանից հանդէպ միեանց և առաջի նոցա փոքր պարտէզ ծաղկանց, նորոգեաց և բարձրացոյց զպարիսպն չուրջանակի։ Եւ հազիւ աւարտեաց զշինուածս միով ամաւ՝ յորում աւուրն իբր 500 գործաւորք աշխատէին՝ ծախս արարեալ աւելի քան զքսան քսակս, բացի նպաստիցն՝ զորս ընկալաւ 'ի վիճակէն՝ զի քաղաքացի համարուեստք (էսնաֆ) իւրաքանչիւրն օր մի բերէին հաց, բրինձ են. և կերակրէին զաշխատաւորս և ինքեանք աշխատէին մինչև ցերեկոյ և ապա միաբանեալ ամանք 5 և ամանք 10 մշակաց վարձս տային և գնային։ Թուի թէ աստի մնացեալ իցէ սովորութիւն համարուեստից յամենայն ամի գալ 'ի Ս. Վանս, մատաղս մատուցանել են.։ Յետ այսորիկ բազմացոյց զեկեղեցականս և կանոնեաց նոցա հանապազօր կանխել 'ի սաղմոսերգութիւն 'ի պաշտաման Տեառն։ Առատացոյց և զլուծս գոմշոց և եզանց և ոչխարաց և այծեաց և ելից 'ի Ս. Վանս ազգի ազգի զարդուք հարկաւորօք, և պայծառացուցեալ փարթամացոյց զնա 'ի փառս Այ. և 'ի պատիւ ամենազօր Ս. Նշանի նորա (Յար. Վրդպտ.ի Յիշտկրն.)։ Եւ յետ երից ամաց իբրև ետես եթէ անհնար լինի վճարումն պարտուցն՝ նպաստիւք վիճակիս, ել Առաքեալ Եպս. անձամբ 'ի Ս. Վանիցս և գնաց 'ի Կ. Պոլիս և

digitised by A.R.A.R.@

իրբև հնաս անդր, ծագեցաւ խռովութիւն մեծ 'ի մէջ այլազգեացն և իշուցեալ ըզ-Սուլթան Ահմէտ թագաւորն յԹռռոյն եդին 'ի տեղի նորին զեղբօրորդին ըզ-Սուլթան Մահմուտն և նա անողորմ կոտորու

մարագ յարդի և տեղիք անասնաց. և 'ի վերայ նոցա սենեակս միաբանից և 'ի լրման միոյ ամի աւարտեցան և չինուածքն ամենայն և վերակացուք էին այնմ միաբանք Ս. Նշանի՝ Յարութիւն Վրդպտ. Երզնկացի՝ որ պատմէ զայսոսիկ, Կարապետ Վրդպտ. Կամարկապցի, Սահակ Վարդապետ Ուռնայեցի, Անդրէաս Վրդ. Պուղատանցի, Թովմաս Վրդ. Սեբաստացի, Ստեփան Վրդ. Եւդոկիացի, Նիկողայոս Վրդ. Հողդարցի ևն., և զի կարի դառն և վշտալից ժամանակի եղև չինութիւնս այս, վասնզի էր սով սաստիկ և պատերազմ այլազգեայց ընդ Պարսից իբրև զհուր բորբոքեալ, վասնորոյ և բազմութիւն դաժան զօրացն երթևեկս արարեալ գրեթէ լափէին կլիզէին և խարէին ըզգիւղ և զքաղաք և նեղեալ տառապեցուցանէին զազգս մեր հարկապահանջութեամբ։ Բայց ժողովուրդք քաղաքիս ըզնեղութիւն իւրեանց թողեալ՝ յաւուրն համարուեստ մի՝ բերէին իւղ. հաց և սրիչ և կերակրէին զգործաւորս և յերեկոյին ամանք 5 և ամանք տասն մշակաց վարձս տային և գնային, մինչև յաւարտ չինուածոյն։ 'Ի վերայ այսր ամենայնի, մեծ բազում պարտս 'ի վերայ վանուց, վասն որոյ Առաքել Արքեպս. Տեսուչն Բազաքիս՝ հաւաքեալ զբազում նպաստս վճարեաց զպարտսն և եդ չինել երկուս մաչս մեծամեծս և յաւարտ չինուածոյն մատուցեալ զԱստուածային Պատարագն և օծեալ զխաչս եդ յիշատակ զմին 'ի Ս. Աճոթին և զմիւսն 'ի Ս. Սարգիս եկեղեցւոջ և ինքն դարձաւ 'ի Ս. Վանս իւր։ Եւ յետ երկուց ամաց (ՌՃՂԴ = 1745) սպարապետն Տաճկաց և բդէշխն եկին 'ի քաղաքս 'ի մէկ Մայիսի՝ երկատասան հազար զօրօք և եկաց աւուրս 8 և անցեալ գնաց 'ի Պարս. 'ի վերայ Թշնամեաց և Թահմազին և անդ մեռաւ, և Թահմազն տիրեաց ամենայն կոնուց և կարասեացն և զօրքն փախստական եղեալ և անգլուխ սփռեալ յամենայն տեղիս բազմութիւնս հասուցին ազգիս մերոյ զի 'ի Սեբաստիոյ մինչ ց'Մարզուան անապատ աբարեալ այրեցին և զվանս Մարզուանուս։ Յաջորդ ամին (ՌՃՂԵ = 1746) 'ի 18 Մայիսի՝ եղիական կիւրակէին եկն 'ի քաղաքս Հէքիմ օղլու Ալի բդէշխն անուամբ սպարապետութեան և ժողովեաց առ ինքն զբազում զօրս իբրև կաճառ, զի երեսուն և ութ երկաուզեան նախարարք եկին՝ թող զայլսն, եկին և զաբուսրզ կոչեցեալ պիղծ լէվէնտքն իբրև տասս հազար հանդերձ զօրագլխովք իւրեանց որք էին կէնճ Ալի, կէնճ Օսման, կէմ ալմազ աւշար օղլին ևն. և բանակեցաւ մերձ իրեարց յեզր քաղաքիս, և Սպարապետն հոգայր զպիտոյսն նոցա այլ օ՛չ շատացեալ պիղծ լէվէնտքն անկանէին 'ի գիւղօրէս և թազում վնասս գործէին, որք և 'ի գիշերի միւսմ գնացեալ 'ի գիւղն Բոգնիկ բազում ոճրագործութիւնս արարին, ըզկանայս յղացուցին, զաղջկունս ապականեցին՝ զորս ինքեանք եկեալ պատմէին 'ի քաղաքիս, և չինականք ամենայն խոյս տուեալ 'ի գիւղօրէից եկին 'ի քաղաքս։ Բայց Ս. Մենասատանս չնորհիւ Տեառն և զօրութեամբ Սրբոյ Նշանին անխախտ և անվնաս մնաց 'ի տեղւոջն, դրունք բաց և եկեալք կերակրեալ մեկնէին, և յետ մի քանի ամսոց կատարեցին ասա 'ի Սեբաստիա զամենայն լէվէնտս և գնացին իւրաքանչիւրն 'ի տեղիս իւրեանց։ Թուի եթէ Սպարապետութիւնն և զուտարուն զօրաց վասն լէվէնտից էր, որով ջնջեալ բարձան զազիր և չար գազանքն 'ի միջոյ։ Յաջորդ ամին 'ի 14 ապրիլի (ՌՃՂԶ = 1746) (Յար. Վրդպտ.). յաւուր տօնի գըլխատման Սրբոյ Կարապետի, ժամանեալ հրաւէր երկնային կոչմանն հանգեաւ 'ի յոյսն բնաւից Տ. Առաքել Արքեպս.ն նահանգիս Սեբաստիոյ, կալեալ զԱթոռ Առաջնորդութեան իբրև ամս 25, և եդաւ պատուով 'ի տապանի 'ի Ս. Վանս, 'ի գաւթի անդ մեծի եկեղեցւոյն հիւսիսակողմն գրան Սրբոյ Տաճարին։ Սակս սորին սակաւ ինչ հարատացուցաք զգրիչ մեր, վասնզի սա եղև առիթ և պատճառ վերջին պայծառութեան և վայելչութեան Սրբոյ Մենասատանիս և անտի և յայսր նովին չքեղութեամբ գնայ օրըստօրէ առաւելեալ ճոխութեամբ, չնորհիւ տեառն ես և փարթամացեալ չքնաղացի։

ՏԻԳՐԱՆ Ս. ԲԻՐԻՇԵԱՆ

(Շարունակելի՝ 9)

digitised by A.R.A.R.@